ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 22.08.2025թ.
Ժամը 10^{40}

Մասնակցում էին՝
անդամներ՝
ՀՀ ՊՆ ԳԿՎ ՏԱ գնումների վերլուծության բաժնի 2-րդ բաժանմունքի պետ Լ. Թունյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿՋՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ՝ Ա. Ասատրյան,
ՀՀ ՋՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿՋՏԱ բաժնի ավագ սպա Խ. Երիցյան,
ՀՀ ՊՆ ԳԿՎ ՏԱ գնումների վերլուծության բաժնի 2-րդ բաժանմունքի գլխավոր մասնագետ Ռ. Զադոյան:
Քարտուղար՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Ս. Եսոյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ս.Եսոյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ս.Եսոյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/6» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանումը
1	«Ռեդինետ» ՓԲԸ
2	«Էյչ Գրուպ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ս.Եսոյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/6» ծածկագրով ընթացակարգի մասնակից «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն հայտի ապահովումը ներկայացրել է կանխիկ փողի ձևով, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը՝ համաձայն ՀՀ Ֆինանսների Նախարարության N 03/12-1/2884-2024 գրության, վերոնշյալ փաստաթղթի իսկությունը ստուգելու նպատակով 19.08.2025թ. հարցում է կատարվել ՀՀ ՊՆ ֆինանսաբյուջետային վարչությանը: 22.08.2025թ. հայտերի գնահատման և ամփոփման նիստի ժամանակ՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ ՀՀ ՊՆ ֆինանսաբյուջետային վարչության տրամադրած տեղեկատվության համաձայն «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված կանխիկ փողի ձևով հայտի ապահովումը համապատասխանում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/6» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/6» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ս. Եսոյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/6» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ է ներկայացրել 2 մասնակիցներ.

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	չ/մ	Քանակը	Գնման գինը (պլանավորված (կանխատեսվող) գնման գինը) /ՀՀ դրամ/	Մրցույթին մասնակցող կազմակերպության			
					անվանումը	գնային առաջարկը /ՀՀ դրամ/		
						առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր (IP Հեռախոսային ապարատ)	հատ	3 470	56 561 000	«Ռեդինետ» ՓԲԸ	41 987 000	8 397 400	50 384 400
					«Էյչ Գրուպ» ՍՊԸ	45 335 550	9 067 110	54 402 660
2	ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր (IP Հեռախոսային ապարատ)	հատ	400	30 000 000	«Ռեդինետ» ՓԲԸ	24 920 000	4 984 000	29 904 000

3.2 Մասնակիցների գնային առաջարկներիի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Ս. Եսոյան)

4.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը՝ 22.08.2025թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/6» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Ռեդինետ» ՓԲԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/6» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Սույն ընթացակարգի մասով սահմանվում է տասնօրյա անգործության ժամկետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ս. Եսոյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Լ. Թունյան

Գնահատող, Ա. Ասատրյան

Գնահատող, Խ. Երիցյան

Գնահատող, Ռ. Զադոյան

Գնումները համակարգող՝ Ս. Եսոյան